

«Եվրասիական  
տնտեսական միության  
մասին» պայմանագրի

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**Գազափոխադրման համակարգերով գազի փոխադրման ոլորտում բնական մենաշնորհների սուբյեկտների կողմից մատուցվող ծառայությունների հասանելիության կանոնների, այդ թվում՝ գնագոյացման եւ սակագնային քաղաքականության հիմունքների մասին**

1 «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 79–րդ, 80–րդ եւ 83–րդ հոդվածների համաձայն՝ սույն Արձանագրությամբ սահմանվում են գազի ոլորտում համագործակցության հիմքերը, գազափոխադրման համակարգերով գազի փոխադրման ոլորտում բնական մենաշնորհների սուբյեկտների կողմից մատուցվող ծառայությունների հասանելիության ապահովման սկզբունքներն ու պայմանները, այդ թվում՝ գնագոյացման եւ սակագնային քաղաքականության հիմունքները՝ անդամ պետությունների պահանջարկները բավարարելու նպատակով:

2 Սույն Արձանագրության մեջ օգտագործվող հասկացություններն ունեն հետեւյալ իմաստը՝

«գազի նկատմամբ ներքին պահանջարկ»՝ անդամ պետություններից յուրաքանչյուրի տարածքում սպառման համար անհրաժեշտ գազի ծավալները,

«գագ»՝ գագանման ածխաջրածնի եւ այլ գագերի վառելիքային խառնուրդ, որն արդյունահանվում եւ (կամ) արտադրվում է անդամ պետությունների տարածքներում, եւ հիմնականում բաղկացած է խտացված գագանման վիճակում գագափոխադրման համակարգերով փոխադրվող մեթանից,

«գագ արդյունահանող անդամ պետություններ»՝ անդամ պետություններ, որոնց տարածքում ավելի քիչ գագ է սպառվում, քան արդյունահանվում եւ արտադրվում է,

«գագ սպառող անդամ պետություններ»՝ անդամ պետություններ, որոնց տարածքում ավելի շատ գագ է սպառվում, քան արդյունահանվում եւ արտադրվում է,

«գագափոխադրման համակարգեր»՝ շինություններ գագի փոխադրման համար՝ ներառյալ մագիստրալային գագատարների շինությունները եւ միասնական տեխնոլոգիական գործընթացով դրանց հետ կապված օբյեկտները՝ բացառությամբ գագաբաշխման ցանցերի,

«գագի փոխադրման ոլորտում բնական մենաշնորհների սուբյեկտների կողմից մատուցվող ծառայությունների հասանելիություն»՝ անդամ պետությունների բնական մենաշնորհների սուբյեկտների կողմից կառավարվող գագափոխադրման համակարգերի օգտագործման իրավունքի շնորհում՝ գագափոխադրման համար,

«գագի հավասարակամ տաբեր գներ»՝ գագի մեծածախ գներ, որոնք ձեւավորվել են ներքին պահանջարկը բավարարելու համար՝ ելնելով, այդ թվում՝ հետեւյալ սկզբունքներից.

գագ արդյունահանող անդամ պետությունների համար շուկայական մեծածախ գնի ձեւավորումն իրականացվում է արտաքին շուկայում գագի վաճառքի գնից հանելով այդ պետություններում գանձվող տուրքերի, վճարների, հարկերի, այլ վճարումների արժեքները, ինչպես նաեւ գագ արդյունահանող պետությունների սահմաններից դուրս գագի փոխադրման արժեքը՝ հաշվի առնելով գագի

մատակարարի արտաքին եւ ներքին շուկաներում գազի փոխադրման արժեքի տարբերությունը,

գազ արդյունահանող անդամ պետությունների համար շուկայական մեծածախ գին, որի ձեւավորումն իրականացվում է գազ արդյունահանող պետության արտադրողի կողմից արտաքին շուկայում գազի վաճառքի գնից հանելով տուրքերը, վճարները, հարկերը, այլ վճարումներ, ինչպես նաեւ գազ արդյունահանող անդամ պետությունների սահմաններից դուրս գազի փոխադրման արժեքը,

«գազի փոխադրման ծառայություններ»՝ գազափոխադրման համակարգերով գազի փոխադրման ծառայություններ,

«լիազոր մարմիններ»՝ սույն Արձանագրության կատարումը հսկելու համար անդամ պետությունների կողմից լիազորված մարմիններ:

3 Անդամ պետություններն իրականացնում են Միության՝ գազի ընդհանուր շուկայի փուլ առ փուլ ձեւավորումը, ինչպես նաեւ ապահովում են անդամ պետությունների գազափոխադրման համակարգերով գազի փոխադրման ոլորտում բնական մենաշնորհների սուբյեկտների կողմից մատուցվող ծառայությունների հասանելիությունը՝ ելնելով հետեւյալ հիմնական սկզբունքներից.

1) փոխադարձ առեւտրում ներմուծման եւ արտահանման մաքսատուրքեր, (համարժեք նշանակություն ունեցող այլ տուրքեր, հարկեր եւ վճարներ) չկիրառելը,

2) անդամ պետությունների գազի ներքին պահանջարկի առաջնահերթ բավարարումը,

3) անդամ պետությունների գազի ներքին պահանջարկը բավարարելու նպատակով մատուցվող գազի փոխադրման ծառայությունների գներն ու սակագները սահմանվում են՝ անդամ պետությունների օրենսդրության համաձայն,

4) անդամ պետություններում գազին առնչվող նորմերի ու չափանիշների միասնականացումը,

5) բնապահպանական անվտանգության ապահովումը,

6) տեղեկատվության փոխանակումն այն տեղեկությունների հիման վրա, որոնք գազի ներքին սպառման վերաբերյալ տվյալներ են պարունակում:

4 Գազի փոխադրման ոլորտում բնական մենաշնորհների սուբյեկտների կողմից մատուցվող ծառայությունները հասանելի են դառնում՝ սույն Արձանագրության պայմաններին համապատասխան, որոնք սահմանվել են միայն անդամ պետությունների տարածքներից առաջացած գազի նկատմամբ: Սույն Արձանագրության դրույթները չեն տարածվում այն հարաբերությունների վրա, որոնցով կարգավորվում է բնական մենաշնորհների սուբյեկտների կողմից մատուցվող ծառայությունների հասանելիությունը, որը կիրառելի է երրորդ պետությունների տարածքներից ծագման գազի դեպքում, եւ Միության տարածքից ու Միության տարածք գազի փոխադրման ոլորտին առնչվող հարաբերությունների վրա:

5 Սույն Արձանագրությամբ նախատեսված՝ անդամ պետությունների գազափոխադրման համակարգերով գազի փոխադրման ոլորտում բնական մենաշնորհների սուբյեկտների կողմից մատուցվող ծառայությունների հասանելիության ապահովման պայմանն է՝ անդամ պետությունների կողմից համալիր միջոցառումների իրականացումը, որը ներառում է.

տեղեկատվության փոխանակման համակարգի ստեղծումն այն տեղեկությունների հիման վրա, որոնք գազի ներքին սպառման վերաբերյալ տվյալներ են պարունակում,

ինդիկատիվ (կանխատեսվող) հաշվեկշիռների պատրաստման մեխանիզմների ստեղծումը՝ սույն Արձանագրությանը համապատասխան,

անդամ պետություններում գազին առնչվող նորմերի ու չափանիշների միասնականացումը,

անդամ պետությունների տարածքներում գազի վաճառքի առեւտրային շահութաբերությունն ապահովող շուկայական գների պահպանումը:

Անդամ պետությունների կողմից սույն կետում նշված համալիր միջոցառումների իրականացման ավարտը ձեւակերպվում է համապատասխան արձանագրությամբ:

6 Անդամ պետությունները ձգտում են գազի հավասարակամ տաբեր գների հաստատմանը բոլոր անդամ պետությունների տարածքներում:

7 Սույն Արձանագրության 5-րդ հոդվածում շարադրված համալիր միջոցառումների՝ բոլոր անդամ պետությունների կողմից իրականացնելուց հետո անդամ պետությունները, եղած տեխնիկական հնարավորությունների, գազափոխադրման համակարգի ազատ հզորությունների սահմաններում, հաշվի առնելով Միությունում գազի համաձայնեցված ինդիկատիվ (կանխատեսվող) հաշվեկշիռը եւ հիմնվելով տնտեսավարող սուբյեկտների իրավաքաղաքացիական պայմանագրերի վրա, անդամ պետությունների գազի ներքին պահանջարկը բավարարելու նպատակով նախատեսված՝ այլ անդամ պետությունների տնտեսավարող սուբյեկտների կողմից գազի փոխադրման համար անդամ պետությունների տարածքներում տեղակայված գազափոխադրման համակարգերի հասանելիությունն ապահովում են հետեւյալ կանոններով.

այլ անդամ պետության գազափոխադրման համակարգը հասանելի դարձնել անդամ պետությունների տնտեսավարող սուբյեկտների համար այնպիսի հավասար պայմաններով՝ ներառյալ սակագները, որոնցից օգտվում են նաեւ այն անդամ պետության գազափոխադրման համակարգի սեփականատեր չհանդիսացող գազարտադրողները, որի տարածքով իրականացվում է փոխադրումը,

գազի փոխադրման ծավալները, գները եւ սակագները, ինչպես նաեւ գազափոխադրման համակարգերով գազի փոխադրման առետրային եւ այլ պայմաններ սահմանվում են անդամ պետությունների տնտեսավարող սուբյեկտների միջեւ կնքված իրավաքաղաքացիական պայմանագրերով՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

Անդամ պետություններն աջակցում են իրենց տարածքներում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների միջեւ «Մագիստրալային գազատարներով գազի փոխադրման մասին» գործող պայմանագրերի պատշաճ կատարմանը:

8 Գազի, նավթի ու նավթամթերքի ինդիկատիվ (կանխատեսվող) հաշվեկշիռների ձեւավորման մեթոդաբանության համաձայն՝ անդամ պետությունների լիազոր մարմինները Հանձնաժողովի մասնակցությամբ մշակում ու համաձայնեցնում են Միությունում գազի ինդիկատիվ (կանխատեսվող) հաշվեկշիռը (ներքին պահանջարկի բավարարման համար նախատեսված արտադրություն, սպառում ու մատակարարումներ, այդ թվում՝ փոխադարձ), որը կազմվում է 5 տարով եւ հստակեցվում՝ մինչեւ յուրաքանչյուր տարվա հոկտեմբերի 1-ը:

Հաշվի առնելով գազի համաձայնեցված հաշվեկշիռը՝ անդամ պետությունների ներքին շուկաների համար հասանելի են դարձնում գազափոխադրման ոլորտում բնական մենաշնորհների սուբյեկտների կողմից մատուցվող ծառայությունները:

9 Անդամ պետությունները ձգտում են զարգացնել երկարաժամկետ փոխշահավետ համագործակցությունը հետեւյալ ոլորտներում.

- 1) գազի փոխադրումն անդամ պետությունների տարածքներով,
- 2) գազատարների, գազի ստորգետնյա պահեստարանների եւ գազի պահուստների ենթակառուցվածքի այլ օբյեկտների շինարարությունը, վերակառուցումն ու շահագործումը,

3) անդամ պետությունների ներքին պահանջարկի բավարարման համար անհրաժեշտ սպասարկման ծառայությունների մատուցումը:

10 Անդամ պետություններն ապահովում են անդամ պետությունների տարածքներում տեղակայված գազափոխադրման համակարգերի գործունեությունը կանոնակարգող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի միասնականացումը:

11 Սույն Արձանագրության դրույթները չեն ազդում անդամ պետությունների՝ միջազգային այն պայմանագրերից բխող իրավունքների եւ պարտավորությունների վրա, որոնց մասնակիցն են իրենք:

Գազափոխադրման ոլորտում անդամ պետությունների՝ Պայմանագրով չկարգավորվող հարաբերությունների նկատմամբ կիրառվում է անդամ պետությունների օրենսդրությունը:

12 Պայմանագրի XVIII բաժնի դրույթները կիրառվում են գազի փոխադրում իրականացնող՝ բնական մենաշնորհների սուբյեկտների նկատմամբ՝ հաշվի առնելով սույն Արձանագրությամբ նախատեսված առանձնահատկությունները:

13 Պայմանագրի 83-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված՝ Միությունում գազի ընդհանուր շուկայի ձեւավորման մասին միջազգային պայմանագիրն ուժի մեջ մտնելու ժամանակահատվածի ընթացքում գործում են գազի մատակարարման ոլորտում անդամ պետությունների միջեւ կնքված երկկողմանի պայմանագրերը, եթե համապատասխան անդամ պետություններն այլ բան չպայմանավորվեն:

---